ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

«17 » .....հուլիսի... 2017 թ. N 174-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ԳՅՈՒՄՐԻԻ ՍԵԼԵԿՑԻՈՆ ԿԱՅԱՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՄՈՐԵԽՆԵՐԻ ԴԵՄ ՔԻՄԻԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԲՈՒՅՍԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության «Գյումրիի սելեկցիոն կայան» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ ընկերություն) 2017 թվականի հուլիսի 14-ի N 04/79 գրությունը՝ մորեխների դեմ պայքարի միջոցառումներ իրականացնելու նպատակով.

Հրամայում եմ՝

1. Ընկերությանը հատկացնել 5 լիտր «Ցիպեր մաքսի» բույսերի պաշտպանության միջոց (այսուհետ՝ բույսերի պաշտպանության միջոց) 33,3 հա ցանքատարածքներում մորեխների դեմ քիմիական պայքարի աշխատանքներ իրականացնելու համար:

2. Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության «Անասնաբուժասանիտարիայի և բուսասանիտարիայի ծառայությունների կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար Ն. Բարսեղյանին՝

1) ապահովել բույսերի պաշտպանության միջոցի տեղափոխումը և հանձնումը ընկերության տնօրեն Ռ. Կարախանյանին,

2) յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո մինչև հաջորդող ամսվա 10-ն աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման վարչություն ներկայացնել հաշվետվություն օգտագործված բույսերի պաշտպանության միջոցի քանակության վերաբերյալ:

3. Սույն հրամանի կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել նախարարի տեղակալ Աշ. Հարությունյանին:

ՆԱԽԱՐԱՐ՝ Ի. ԱՌԱՔԵԼՅԱՆ